

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ
08.07.2019

Հուլիսի 4-ին Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը
Կապան համայնքում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 31 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր տասնինը,
աշխատանքի տեղավորման՝ յոթ, իրավական հարցով՝ երկու,
աշխատանքի վերականգնման, ուրբակոծությունից ավերված շենքի
համար փոխհատուցման, գյուղապետից բողոքի հարցերով՝
մեկական քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից տասներկուսին տրվել է դրական
լուծում, չորս դիմում գտնվում է ուսումնասիրման փուլում, երեք դիմում
մերժվել է:

Աշխատանքի տեղավորման մասին դիմումները վերցվել են
հաշվառման, եւ ուսումնասիրվում են դրանց լուծման
հնարավորությունները:

Մյուս դիմումները մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում
են մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում: